ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2024 թ. ապրիլի 17-ին՝ ժամը 12:00–ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան՝ /հեռավար/	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան՝ /հեռավար/	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)
Արմենուհի Պետրոսյան՝ /հեռավար/		ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)
Նարինե Հովհաննիսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի անդամ)
Մարիանա Մինասյան՝	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի անդամ)
Վերոնիկա Խորասանյան /հեռավար/	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում

Նիստն անցկացվեց հեռավար ձևաչափով՝ հանձնաժողովի երկու անդամի և հանձնաժողովի քարտուղարի՝ գործուղման մեջ լինելու հանգամանքով պայմանավորված:
Արթուր Մարտիրոսյանը հանձնաժողովի նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց օրակարգի հարցերը: Հանձնաժողովը որոշեց հաստատել հանձնաժողովի նիստի օրակարգը:
Կողմ 5, դեմ 0

1. Օրակարգի 1-ին հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց, որ «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» միջոցառման իրականացման նպատակով ԵՔ-ԴՄ-ԵԱ-03/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի համար սահմանված ժամկետներում հայտեր չեն ստացվել:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 24.12.2003թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման 32-րդ կետ, բ) ենթակետով

1. ԵՔ-ԴՄ-ԵԱ-03/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը հայտարարել չկայացած:
2. Հաստատել ԵՔ-ԴՄ-ԵԱ-03/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:
3. Քարտուղարին՝ ARMEPS համակարգով լուծարել ԵՔ-ԴՄ-ԵԱ-03/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի գործընթացը:
4. Հաշվի առնելով օրակարգի 1-ին կետը և ընդունած որոշումը՝ օրակարգային 2-րդ հարցը հանել օրակարգից:

Կողմ 5, դեմ 0

ԵՔ-ԴՄ-ԵԱ-03/24 ծածկագրով «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողով